

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ականավոր պատմաբան, հայագետ, բանասեր ու ազգագրագետ Գր. Խալաթյանը (1858—1912) թողել է արժեքավոր գրական ժառանգություն: Հարուստ և բովանդակալից է նրա գրած նամակների հավաքածուն. ուղղված լինելով իր ժամանակի գիտության և մշակույթի գործիչներին, այդ նամակները զգալի հետաքրքրություն են ներկայացնում:

Գիտական որոնումների հարուստ և բեղուն շրջան հանդիսացան Խալաթյանի համար անցյալ դարի 80-ական թթ.: Իր գիտելիքները հարստացնելու, գիտական աշխարհին մոտիկից ծանոթանալու նպատակով նա Մոսկվայից մեկնում է Կովկաս, մասնակցում Խիֆլիսում գումարված համառոտական հնագիտական V համագումարի աշխատանքներին, ապա՝ արտասահման: 1884 թ. նա մեկնում է Գերմանիա (Մյունխեն), 1888-ին՝ Իտալիա (Վենետիկ, Նեապոլ, Հոմ, Ֆլորենցիա), ապա՝ Նորից Գերմանիա (Լայպցիգ), Ավստրիա (Վիեննա):

Ձրադվելով հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության և մշակույթի բազմաթիվ հարցերով, նա ձեռնամուխ է լինում Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության գրչագիր մատյանների և ձեռագիր հիշատակարանների ուսումնասիրության գործին: Խալաթյանը մոտիկից ծանոթանում է հայ և օտար հայագետներին, գրական կապեր է հաստատում նրանց հետ:

Այդ տարիներին են վերաբերում Գր. Խալաթյանի գրած նամակները իր ուսուցիչ և բարեկամ, հայագետ, Լազարյան ձեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Հմինին (1815—1890): Բանասիրական մեծ սրժեք են ներկայացնում Գր. Խալաթյանի ինչպես Կովկասից, այնպես էլ արտասահմանից Հմինին ուղղված նամակները, որոնք լույս են սփռում նրա աշխարհայացքի, արտասահմանում ունեցած գիտական գործունեության վրա, օգնում հասկանալու 80-ական թթ. Արևմուտքի գիտական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները: Այդ նամակներում շոշափվում են հայ ժողովրդի պատմության և մշակույթին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Հրապարակվող նամակները ունեն նաև կենսագրական նշանակություն և հաջորդաբար նյութ են տալիս Խալաթյանի կյանքի այդ ժամանակաշրջանի մասին:

Գր. Խալաթյանի՝ Մ. Հմինին գրած նամակների ինքնագրերը պահվում են Հայկ. ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի Խալաթյանի ֆոնդում:

Նամակները հրապարակվում են աննշան կրճատումներով:

Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ቀ ሀ ሀ ሰ ሀ ፆ ገ ፆ ከ ሆ

№ 1

ԳԼԽԱՄԼԾԱՐ և սիրելի վարժապետ

Դեռ Տփլիսից ևս մտադիր էի նամակ գրել Ձեզ, բայց զանազան հանգամանքներ արգելք եղան ինձ. և ահա՝ միայն 35 օր Մոսկվա թողնելուցս հետո՝ գրիչ ևմ առնում ձեռս — այնքան որ դժվար է այստեղ պարապելու: Արդարև, ամառնային Տփլիսը այն չէր, ինչ որ է աշնանայինը և թևակտ քաղաքի համարյա բոլոր բարձր դասակարգը ամարանոցներում է պատսպարվում անտանկի տոթից — այնուամենայնիվ ևս միջոց ունեցա տեսնվել և խոսակցել տեղային ինտելիգենցիայի մի քանի ներկայացուցիչների հետ և մեծ ուրախությամբ ? օր այնտեղ անցրի:

Օրական խնդիրներից կարևորագույնը էր Տփսիսի առաջիկա հնազիտական ժողովը¹, որին այստեղի հասկացող դասը (հայերից) մեծ նշանակություն է տալիս... Մի տեսակ ցավ և վիշտ էր պատում ամենքի սրտին, երբ ասում էին, թե այդ ժողովում շատերը մեր հայ գիտնականներից զանազան պատճառներով բացակա կլինին. օրինակ՝ Հայր Ալիշանը՝ Վենետիկում լինելի Աշխարհագրա-
յան ժողովի պատճառով՝ Տփսիս գալու չէ. Ջեզ համար ցավելով պատմում էին, թե Դուբ դեռ հաստատապես վճռած չէր Անդրկովկասը այցելելու և հագելի՝ թե ներկա լինիք հն. ժողովին. Պատկանյանցի համար լուր է տարածվել, որ հիվանդ է։ Այս անմխիթարական լուրերը առհասարակ լավ տպավորություն չեն գործում տեղային թե բարձր և թե միջակ դասի վերա. նորա կարող են ավելի հուսահատեցնել հայ հասարակությունը, որ օրեցօր սպասում է տեսնել իր գիտ-
նական հայրենակիցներին, որժանապես ընդունելու նոցա և հայտնելու իրանո առ ի սրտե համակրությունը։ Մանավանդ խոսում են Ջեր մասին և ցանկանում են Ջեր ներկայությունը Տփսիսում, ուր Ջեր հին աշակերտներից հարյուրա-
վոր անձինք կան, որոնք — ասենք բուն հայի ոճով — «իրանց աչքի ու գլխի վերա տեղ ունեն Ջեզ համար պատրաստ»։ Այսպես է առհասարակ Տփսիսի և մյուս հայաբնակ քաղաքների տրամադրությունը, որքան որ ես կարողացա անձամբ դիտել և ուրիշներից իմանալ։ Ուստի՝ հուսով եմ, որ ինձ կհաղորդեք. արդյոք հաստա՞տ գալու եք Դուբ Տփսիս և ե՞րբ։ Շատ ցանկալի էր, որ Դուբ մի քանի օրով վաղ գայիք Տփսիս և հնազիտական ժողովից առաջ — այսինքն օգոստոսի վերջերին — այցելելով Ալեքսանդրապոլին — գնայիք Անի, Մրեն, Բագրան, Թոփաուլի (նոր պեղած հնություն), Ղարս և էջմիածին, եթե կամե-
նաք։ Այստեղի երիտասարդները, որոնք լսել են Ջեր գալու մասին, անհամ-
բերությամբ սպասում են Ջեզ. մի խումբ «հեծելագորաց» միշտ պատրաստ է հետևելու Ջեզ, ուր որ էլ գնայիք. իսկ մեր «պապենական օջախը» պատրաստ է հյուրասիրելու Ջեզ, եթե Դուբ արժան համարեք այդ ասպնջականությունը։
Հանապարհների մասին ամենեկին հոգ մի անեք. Տփսիսից մինչև Ալեքսան-
դրապոլ (և հետո մինչև Ղարս էլ) պատվական խնդրի է, որ ոչինչ դժվարու-
թյուններ չունի, մանավանդ, եթե 'Դուբ Տփսիսից՝ փոխանակ տրոյկայի կառը

վեր առնեք: — Այս բոլորի մասին ես անհամբերությամբ սպասում եմ Ձեր պատասխանին:

Վերջապես այս օրերս դուրս եկավ երկար ժամանակից սպասած «Փորձի» մայիսի-հունիսի համարը: Մի ցավալի իրողություն իսկույն ընթերցողի աչքին է զարկում. ամսագրի խմբագիրը՝ նյութական միջոցների պատճառով այլևս չկարողանալով շարունակել իր հանդեսի հրատարակությունը և 5 տարվա մեջ 14 հազար ռուբլի վնաս կրելով, ստիպված է դադարեցնել այդ գործը: «Եթե «Փորձը» — ասում է հանդեսի խմբագիրը, պահանջ է դարձել մեր ընթերցող հասարակության համար... թող այդ հասարակության առաջադեմ ներկայացուցիչները գտնեն այն միջոցները, որոնցով հնարավոր լինի շարունակել ամսագրի հրատարակությունը»²: Այժմ Տփլիսում բաժանորդագրություններ են ժողովում «Փորձի» համար և ամենայն միջոցներ են գործ դնում կրկին ոտի հանեցնելու այդ մեր միակ Ռուսահայերիս օրագիրը, որ իր կարճատև գոյության միջոցին այնուամենայնիվ տվեց հայ հասարակությանը բավականին նյութ կարդալու և խորհելու համար՝ որ գլխավորն է՝ հաստատ, դրական և լուրջ տեղեկություններ բանասիրականին և գիտության բոլոր ճյուղերին վերաբերյալ: Հայտնի բան է, կավելացնեմ ես — որ «Փորձը» միևնույն ժամանակ ուներ և խոշոր թերություններ, որոնք՝ գուցե մասամբ՝ նպաստեցին նրա անկմանը: — Մայիս-հունիսի համարի մեջ պ. Երիցյանը, որի հոդվածների առթիվ՝ Սմբ. Շահազիզյանը մի հաստափոր գիրք⁴ էր տպել Բաքվա վաճառական Սարգրսյանցի փողով — պատասխան է գրել Շահազիզյանցին, որ արժանի է ուշադրության: Ես ավելորդ եմ համարում մանրամասնորեն խոսել այդ պատասխանի վերա, հուսալով, որ Դուք արդեն կարդացած կլինեք այն: Սույն իսկ համարի մեջ զետեղված է և Ձեր ռեֆերատներից մեկի թարգմանությունը, որ (ռեֆերատը) Դուք կարդացիք ձմեռը Մոսկվայի հնագիտական ժողովի նիստում — «Миднийцы в древней Армении»⁵:

Այժմ թող ներելի լինի ինձ խոսել մի քանի խոսք իմ մասին: Ինչպես Ձեզ քաջ հայտնի է, ես թողի Մոսկվան խորին սրտով խոցված այն անբավականությանց համար, որոնք ծագեցան «Մշակի» մեջ (№ 72) լույս տեսած կազարյան ձեմարանի վերաբերությամբ մի հոդվածի առթիվ: Ի զո՛ւր եղան իմ բոլոր ջանքս հավատացնելու, թե այդ հոդվածի հեղինակը ես չեմ. ի զո՛ւր եղան, ասում եմ — որովհետև մի քանի «բարեմիտ» անձինք չգիտեմ ինչ զգացմունքներից դրդված՝ ամենայն հնար գործ են դրել ինձ վերա հաստատելու այդ հոդվածի հեղինակությունը: Չկարողանալով տանել այսպիսի մի անհիմն և անտեղի զրպարտություն, որ կարող է գրգռել իմ դեմ մի քանի պատվելի անձնավորություններ, ես ստիպված եմ լրագրի միջոցով հերքել այդ զրպարտանքը երկտող նկատողությամբ, որ՝ երև թե՝ շուտով կկարգաք: Ինձ անհնարին է նշանակել նկատողությանս մեջ վերոհիշյալ հոդվածի հեղինակի անունը. այդ հակառակ է լրագրի խմբագրության սովորությանց. բայց այդ լուծությունը դեռ չէ նշանակել, թե անծանոթ է ինձ Պետերբուրգից Լ. ստորագրությամբ հոդվածագիրը: Նորա անունը ես իմացա «Մշակի» խմբագրության մեջ: Իր ժամանակին ես կհաղորդեմ Ձեզ այդ հոդվածագրի անունը. որ — ի դեպ լինի ասել — մի կհիշտու լուր էլ նոր օրերս էր հաղորդել «Մշակի» մեջ պ. Քանանյանցի⁶ վերատեսչության պաշտոն ստանալու առթիվ. առ այժմ այսքան միայն կասեմ, որ զո՛ւն պ. Քանանյանցը չէր կարող սպասել այդ պարոնից այնպիսի հա-

խուռն հարձակման, որ գործել էր ի. ճեմարանի և նրա տեսչի դեմ կեղծ ստորագրությամբ (Լ.) Զոյիլոսը:

Քեկ մի փոքր ուշ, բայց դարձյալ ուղարկում եմ Ձեզ «Հавид Сасунский» վեպի թարգմանության համար իմ գրած առաջարանը. բնագիրը արդեն Ձեզ մոտ է: Լիաճուս եմ, որ եթե հնար է գրանից մի բան առաջացնելու — (հայտնի բան է՝ թե աշխատությունը արժեք ունի), կառաջացնեք: Հակառակ դեպքում՝ կարելի է, ես ինքս տպագրել տամ ներան Տփիսում: Տեսնենք:

Այսօր ստացա «Մշակ» լրագրի 132 համարը. խմբագրության պատասխանների շարքում կարդացի, որ Գուր մի օրինակ Ձեր վերջին աշխատությունից (արձանագրությունները) բարեհաճել եք ուղարկել և ինձ՝ ուղղակի «Մշակ» լրագրի խմբագրության միջնորդությամբ, որո մասին պ. Արծրունին հայտնում է ինձ: Իմ խորին շնորհակալությունս՝ խնդրեմ՝ բնորոշեցեք այդ նվերի համար, որ՝ ի թիվս այլոց՝ կմնա ինձ իբրև հիշատակ և նշան Ձեր առ ինձ ունեցած ուշադրության և համակրության: Հուսով, որ Ձեր բրոշյուրն էլ (Эпос⁷) կուղարկեք, եթե նա արդեն լույս է տեսել. հայ հասարակությունն էլ, լսելով Ձեր այդ աշխատության մասին — անհամբերությամբ սպասում է:

Ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը և առ ի սրտե երախտագիտությանս արտահայտումը —

Ձեր խ. ծ. Գր. ԽԱԼԱԹՅԱՆ

1881 թ. 25 հուլիսի
Ալեքսանդրապոլ.

№ 2

Գերամեծաբ և սիրելի վարժապետ

Իմ առաջին նամակս այժմ անշուշտ ստացած կլինեք և պատասխանն էլ գրած. հոգով ցավեցա, իմանալով Ձեր նամակից Ձեր ժամանակավոր տկարության մասին, որ կարող է աղղելք լինել Ձեզ այցելության ելանելու Անդրրկովկասին: Կցանկամ կատարյալ առողջություն, որ միջոց տար Ձեզ գլուխ բերելու Ձեր վաղուցվա բաղձանքը — ճանապարհորդություն ի Հայս — բաղձանք միևնույն ժամանակ և շատերին:

Մեծավ շնորհակալությամբ սաացա և Ձեր երկրորդ պատվական երկասիրությունը — Моисей Хор. и древний армянский эпос — որ այս անգամ բարեհաճել էիք առաքել ինձ ուղղակի՝ Ալեքսանդրապոլ և որին՝ խոստովանիմ Ձեզ՝ ես սպասում էի անհամբերությամբ: Պետք է ասել, որ տպագրությունը շատ մաքուր է և ղեղեցիկ. իսկ ինչ վերաբերում է գրքին՝ անկասկած նա թույլեց ինձ վերա շատ ղեղեցիկ տպավորություն: Արդարև՝ խնկելի խորենացու սովերը թերևս մի փոքր անհանգիստ լինի այժմ, թերևս մեր քաղաքում ազգասերների սիրտը մորմորվի այն անակնկալ կայծից, որ թափանցում է հին մատենագրության զաղտազոդի բավիղները. լուսավորելով միին և կասկածավոր հանգամանքներ, թերևս — ասում եմ — գտնվին անձինք, որոնք թեև գիտության անունով, բայց իրավես այդ թիված ազգասիրությունից զրդված՝ դիմվորվին Ձեր դեմ և պաշտպանեն այն բարի հին ժամանակը, որ ոչինչ քննադատական ոգի չէ ներում և չէ՝ ուզում ճանաչել անգամ. բայց amicus Plato, sed magis amica Veritas⁸: Միևնույն ժամանակ «հերքելով քաղղեական գրքի վավերականությունը դուք ի նկատի ունիք — ինչպես ասած է Ձեր աշխատության մեջ (էջ 31) ջրել, հերժել այն օտաբազդի — Բաղդակաճ ծագումը, որ

սխալմամբ վերագրած է հայոց պատմությանը». այս մի գործ է, որո համար յուրաքանչյուր ճշմարիտ հայ մարդ ևրախտադետ սրտից շնորհակալ պետք է լինե Ձեզ:

Այսքանը առ այժմ հաղորդելով Ձեզ՝ ավելի մանրամասն հաշիվս սույն գրքի մասին կթողնեմ «Մշակի» ընթերցողների համար: Եթե արգելքներ չպատահին՝ հուսով եմ մի ընդարձակ հոդված ուղարկել այդ լրագրին Գարագաշյանի (քննական հայոց պատմություն) և Ձեր աշխատությանց վերաբերությամբ. (որքան, հայտնի բան է, իմ միջոցներս և գիտությունս կներեն): Բայց այժմեւ ես կհայտնեմ Ձեզ այն առաջնորդող միտքը, որ կարմիր թելի պէս կանցնի բոլոր հոդվածիս միջով:— Վերջին երկու տարիներում լույս տեսան երկու նշանավոր ըննություններ մեր հայկական պատմության հնագույն դարերի վերա. մեկը Գարագաշյանի պատմությունը, մյուսը — Ձեր ՅՈՍԵ-ր: Երկու աշխատությանց նպատակն էլ միևնույն է — հերքել Մար Աբաս⁹ կոչված Ասորու գոյությունը, համարելով նորան մի կեղծ, մտացածին անձն: Սակայն երկու գրվածների մեջ կա և մեծ տարբերություն. այն է. որ առաջինը վերջ ի վերջո դալիս է բացասական հետևանքի, երկրորդը — դրական հետևանքի: Ավելի պարզ ասած — Գարագաշյանը՝ հերքելով Մար Աբասի գոյությունը՝ վերագրում է բոլոր նորա անունով ավանդած խոսքերը իրան՝ Խորենացուն, որ իբր թե շինել, սաբել ու հնարել է իրանից ամբողջ հնագույն մասը հայոց պատմության ինչպես մի խարդախ և խարեբա առասպելախոս: Հասնելով այս եզրակացությանը, պոլսեցի հեղինակը բոլորովին չէ էլ ուզում ենթադրել, որ Խորենացին՝ իբրև քաջ հասկացող ազգային վիպասանության խորհուրդը՝ միայն դիմակի տեղ է գործ դրել Մար Աբասի անունը, ծածկելու, քողարկելու այդ իսկ վիպասանությունը, որից նա այնպիսի առատությամբ քաղել է հայ պատմության հին ժամանակները և որո գոյությունը, էությունը և նշանակությունը դուք պարզորեն բացատրել եք Ձեր ՅՈՍԵ-ի մեջ: Ուրիշ խոսքերով. պ. Գարագաշյանը Հայկի, Արամի, Արայի, Պարույրի, Տիգրանի և այլոց պատմությունը համարում է շինած, հնարած և միայն Խորենացու գլխից դուրս եկած «փծուն առասպել». (էջ 164). մինչդեռ Դուք հակառակ այդ կարծյացր՝ բոլոր այդ ազգային հերոսների սկզբնական նկարագիրները տեսնում եք հայ ժողովրդական վիպասանության մեջ, հայ վիպասանների ու աշուղների երգերի մեջ, որոնք ոգևորված իրանց հայրերից ու պապերից լսած հին ավանդություններով և պատմություններով՝ քաղցրաձայն, «բամբուսաբեր գեղեր»:

Ահա՛ թե ինչ խոշոր, աչքի զարկող տարբերություն եմ տեսնում՝ գոնե ես՝ Գարագաշյանի և Ձեր երկասիրությանց մեջ:

Սգտավետ և միանգամայն կարևոր համարելով Ձեր ՅՈՍԵ-ր ընթերցող հայ հասարակության համար, ես մի միտք հղացա (ափսոս, որ մի փոքր ուշ) — թարգմանել Ձեր աշխատությունը աշխարհիկ բարբառով և հրատարակել նորան Տփլիսում: Մեծապես շնորհակալ եմ, որ հարգել էիք իմ խնդիրս և հեռագրով հայտնել էիք ինձ Ձեր բարեհաճությունը իմ ձեռնարկած գործի մասին, որով հայտնի բան է, ավելի ոգի և եռանդ եք տվել իմ նորավարժ գրչին:

Բսկ ինչ վերաբերում է Ձեր առաջարկած գրքերին¹⁰, ես ուրախությամբ հանձն եմ առնում նախ՝ մի տասն-քսան օրինակ ինքս բաժանելու այստեղ և ապա՝ բանակցելու Տփլիսի գրավաճառանոցների հետ Ձեզ ձեռնառու պայմաններով: Ուստի՝ ինչպես հեռագրած էի Ձեզ՝ խնդրեմ անհապաղ — քանի որ ես այստեղ եմ — (մինչև սեպտեմբերի 3—4) ուղարկեք Ալեքսանդրապոլ 150 օրի-

նաև ՅՈՍԵ-ից, որք անշուշտ կծախսվին հնազորական ժողովի ժամանակ: Ինչ-
լի պահանջ լինելուս, ես իսկույն կիմացնեմ Ձեզ:

Մի օր առաջ կարդացի «Մշակի» 145 համարում «С. П. Вѣдомостѣи»¹¹
177 Տ. տպած անանուն ֆելիետոնիստի Ձեր դեմ գործած կեղտոտ և ստոր քա-
ջագործության մասին, որ՝ ինչպես ասում է հայ լրագիրը՝ միայն զգվանք կա-
րող է ազդել ընթերցողի վերա: Ցավում եմ, որ կարող չեմ ձեռք բերել այդ հա-
մարը. այստեղ С. П. Вѣд. ստացող երկու անձինք միայն կան. դոցանից մեկը
միշտ պատահում է յուրաքանչյուր ստացած լրագրի համարը. մյուսը խոստա-
ցել է ուղարկել այսօր և դեռ չէ ուղարկել: Ես անպատճառ կգտնեմ 177 հա-
մարը և որքան կարող եմ — հանուն արդարության — կպարզեմ գոնե հայ ըն-
թերցողների առաջ այդ թշնամական անփաստ և անազնիվ հարձակմունքնե-
րը. որոնցից առաջինը լույս տեսավ դեռ ապրիլին՝ ГОЛОС-ի¹² մեջ և որո պա-
տասխանը տրվեցավ յուր ժամանակին «Մշակի» 115 համարում: Լիահույս եմ
եւս, որ որպիսի սառնությունը և ծաղրով ընդունեցիք առաջին աղտոտ պամ-
ֆլետը, նույնպիսի սառն արհամարհանք կընդունիք և այս երկրորդը, երբեք
թույլ չտալով վերավորվիլ Ձեր վսեմ և ազնիվ սրտին, որ միշտ բարձր է եղած
այս տեսակ լպիրշ և զազիր լեզվազարություններից:

Արդեն 5 շաբաթ է, որ ես Ալեքսանդրապոլ եմ. բայց մինչև այսօր հազիվ
միջոց եմ ունեցել մի երկու տեղ գնալու քաղաքից դուրս: Անցյալ շաբաթը ամ-
բողջովին անցրի 40 վերստի վերա գտնված Շիշթափա գյուղում, ուր կա մի
պատվական ջերմուկ (երկաթի ջրեր): Վաղը գնալու եմ Թոփաուլի գյուղը (8—
10 վերստի վերա, որտեղ դեռ անցյալ տարի բացել են մի հին եկեղեցի՝ հնա-
գույն ճարտարապետությամբ): Ամբոխը՝ հավատարմով այնտեղի կատարվող
նշաններին ու հրաշքներին՝ խուռն բազմությամբ դիմում է ուխտ, ազելով՝ ըստ
սին սովորությանց ջերմեռանդ հեթանոս հայերին՝ անթիվ եզներ ու ոչխարներ
և մինչև երկինք բարձրացնելով մատաղների ծուխումուխը: Բացի Թոփաու-
լիից — մտադիր ենք մեծ ընկերությամբ գնալ ամսուս 23-ին 8 ավուր էջմիա-
ծին, Աշտարակ և Երևան: Իսկ չարսը, Անին, Մրենը և Բաղրանը թողնում եմ
Ձեր գալստյանը, հուսալով Ձեզ հետ միասին այցելելու այդ հին հիշատակա-
րանները: Ուստի՝ ինչպես գրած էի առանձին նամակովս — այժմ էլ կրկնում եմ.
խնդրելով օրով առաջ իմա՞ տալ ինձ Ձեր գալստյան մասին: Հայտնի բան է՝
Ձեր կամքն է գալ կամ չգալ Անդրկովկաս, բայց ես հավատացած եմ, որ Ձեր
չգալը մեծ տրտմություն կպատճառե ոչ միայն Ձեր բարեկամներին ու աշա-
ղերտներին, որք անհամբերությամբ սպասում են Ձեզ, այլև հայ հասարակու-
թյանը, որ արդեն ուսել է ճանաչել ու գնահատել իր անշահասեր գիտնական
Մշակներին:

Հոգով ուրախացա, կարդալով «Кавказ»¹³ լրագրում պ. Քանանյանցի և
ձեմարանին վերատեսուչ նշանակվելը: Հուսով եմ, որ «Մշակի» 135 համա-
րում հրատարակածս նամակից հետո, նա այլևս ուշադրություն չի դարձնե այն
անհիմն և չարամիտ բարրաջանաց վերա, որոց նպատակն է անհավատարմու-
թյան որով ցանկել մի պատվելի դաստիարակչի և տեսչի — և նորա հին աշա-
կերտի մեջ: Առ այժմ այսքան. ներեցեք շատախոսությունս:

Ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը ևս պի Ձեզ

Ձեր աշակերտ Դր. ԽԱԼԱԹՅԱՆ

1881 թ. 11—12 սեպտեմբ.

Ալեքսանդրապոլ.

№ 3

Պեռամեծար Նիկիտա Օսիպովիչ

Արդեն ամիս ու կես սահել անցել է, երբ ես մնաք բարյավ ասացի Ձեզ խոստանալով մերթ ընդ մերթ տեղեկություն տալ իմ և իմ պարապմանցս մասին. բայց կցավիմ, որ մինչև ցայսօր անճիշտ գտնված եմ: Թեև նամակիս ուշացնելու պատճառներեն գլխավորագույնը՝ վիճակիս անորոշությունն էր. վասնզի 2 շաբաթ ի Պետերբուրգ գրեթե այդչափ ևս ի վիճակիս կենալով՝ անդադար շտապ տագնապի մեջ էի, թեպետ անշուշտ ունեի պարապմունք և երբեմն նաև բավական շատ: Ինչ և իցե. բայց սակայն մինչև չհասա Մյունխեն և կանոնավորապես չկարգադրեցի վիճակս, զբաղմունքս, չկարողացա համարյա ոչ մի օրինավոր նամակ գրել: Այս իմ նախերգանքս է. բուն պատմությունը հեռուեն պետք է սկսվի, այսինքն, երբ ես տակավին Ռուսաստան էի:

Կուցե պրն. Քանանովը, որին համառոտ նամակ էի գրել Պետերբուրգեն մի գործի առթիվ, արդեն պատմած լինի Ձեզ, թե փոքր էր մնացել, որ ես փոխանակ Գերմանիո և մասնավորապես Մյունխենի — Երուսաղեմ և էջմիածին ուղևորվեի՝ Ֆրանսիական Ակադեմիայի համար այդ տեղերում որոշ հայ գրչագիրները արտագրելու և յուրյանց նպատակին համեմատ՝ մինչև այսօր չհրատարակված այլ գրչագիրներ գտնելու՝ եթե այդպիսիք կան: (Ակադեմիան ուզում է շարունակել հանգուցյալ Դյուլդերի¹⁴ ստվար հրատարակությունը Խաչակրաց մասին, ուստի և նոր աղբյուրներ և նոր նյութեր է որոնում): — Այդպիսի մի առաջարկություն ֆր. Ակադեմիայի ներկայացուցիչ կոմս Ռեանը՝ մի ռուս գիտնականի միջնորդությամբ անում է պրոֆ. Պատկանովին, որ՝ գլխավորապես յուր հիվանդության և ծովային ճանապարհորդությունը դժվար տանելու պատճառով՝ ցավելով մերժում է: Այդ միջոցները ես պատահեցա նորա մոտ և նա առաջարկեց ինձ, որ եթե կամիմ՝ շտապեմ օգտվել այդ գեղեցիկ դեպքից, որո նմանը, ինչպես նա էր ասում, ստեպ չի պատահիլ հայ ուսումնականին. վասն զի այդպիսի ճանապարհորդություն՝ բացի էջմիածնի և մանավանդ Երուսաղեմի հարուստ մատենադարանաց հետ ծանոթութենեն, առիթ կուտա և ֆր. Ակադեմիայի հետ հաղորդակցություն ունենալ, որո հետևանքը անշուշտ միշտ արդյունավետ է, մանավանդ պնդում էր նա, մի երիտասարդի համար, որ նոր է մտել գիտության ասպարեզը: Ընդամին դիտելու է, որ Ակադեմիան պետք է չձարեր ճանապարհորդության դրամը՝ ամսական 1000—1200 ֆրանկ: — Պատկանովը ներկայացրեց ինձ ում հարկն էր և ապա նամակ ուղարկվեցավ կոմս Ռեանին իմ մասին, որ պետք է հեռագրով պատասխան տար, վասն զի ես պահանջում էի, որ շուտով վճովի խնդիրը — գնալու կամ չգնալու: Ինչուս եկավ, որ կոմսը այն միջոցին Ջենովա էր՝ յուր ամառանոցում, իսկ հարցը չէր կարող վճովիլ առանց Ակադեմիայի անդամոց խորհրդակցության և հավանության. խնդիրը առաջարկողն ևս Ակադեմիային՝ կոմսը պետք է լիներ: Ուստի հասկանալի էր, որ ուզածիս պես շուտ չէր կարող գործը գլուխ գալ, և ահա Ռեանն ևս պատասխանում է. «*delai trop court pour conclure affaire cette annee*»¹⁵: — Այսպիսի վիճակի մեջ է խնդիրը. թե ի՛նչ ելք պիտի ունենա չգիտեմ:

Երուսաղեմեն ու էջմիածնեն կանցնիմ դարձյալ Պետերբուրգ, ուր տակավին կան կարևոր բաներ. խնդիրը այս անգամ քննությանցս մասին է: Ինչպես Ձեզ հայտնի է, Պետերբուրգեն տարաշխարհ անցնելուս գլխավոր պատճառը՝

այդ մասին որոշ տեղեկություններ քաղելն էր. ուստի՝ բացի Պատկանովի կարծիքեն, ևս դիմեցի ղեկանին, որ՝ ըստ կարգին՝ հարցումն արավ ֆակուլտետին և վերջապես ինձ հաղորդեցին, թե Հայոց լեզվի մագիստրոսության համար (բացի պարսկերեն) Զենդը անհրաժեշտ է, իսկ Սանսկրիտը այնքան, որքան պետք է Զենդը իմանալու. որովհետև առանց Սանսկրիտի անհնար է չենդ ուսումնասիրել: Եզովր աշխատում էր այս մասին օգնել ինձ, ցույց էր տալիս յուր կարեկցությունը. քննության ենթարկելով ֆակուլտետի նախկին անհիմն վճիռը Զենդ և Սանսկրիտ լեզվաց մասին՝ հայերենի վերաբերությամբ. միևնույն ժամանակ նա ասում էր. թեպետ քննողները ավելի պահանջելու իրավունք չունին Զեզանից, բանի որ ինքյանք ևս (օրինակ Պատկանովը) ոչինչ քննություն տված չեն, այսու ամենայնիվ պետք է լավ պատրաստվիլ: Իսկ եթե դուք շտապում եք քննություն տալու, ավելացնում էր նա, իրավունքներ ձեռք բերելու համար, այդ իրավունքները դուք այժմ ևս կարող եք ունենալ, եթե միայն Ձեր լիկիոնի խորհուրդը հակառակ չէ Ձեզ. ըստ որում, ամենայն իրավամբ Դուք կարող եք լինել ИСПОЛН. ДОЛЖ. ЭКСТРАОРД. ПРОФ., որ իրավունքներ ունենալուց զատ տալիս է օրինավոր ուժիկ, որ Ձեր պարապմանց համար չնչին բան չէ: Միևնույնը պնդում էր և Պատկանովը ոչ մի և երկու անգամ:

Այսպիսի հուսաց և մտածմանց մեջ՝ ևս հրաժարական տվի Պետերբուրգին: Մայիսի 15 (27)-ին ևս արդեն Վիեննա էի. ինչպե՞ս անցուցանեմ ժամանակս այս զեզեցիկ քաղաքում, որ հետո չափսոսամ, չփռչմանեմ,— այս էր բոլոր իմ հոգս ճանապարհին: Եվ ահա վճռեցի ամբողջ ժամանակս նվիրել երկու մատենադարանաց՝ Կալսերական և Մխիթարյան. այսու ևս կամեի մի անգամ ընդ միշտ հիմնավոր կերպով ծանոթանալ այդտեղի գտնված հայ գրչագրաց հետ, այն է՝ կազմել զոցա մանրամասն ցուցակը, բրբրելով յուրաքանչյուր ձեռագիր՝ ուշադրության արժանի հատվածներ արտագրել, ծանոթությունը անել նոցա մասին, և վերջապես զանց չառնել հարցասիրական հիշատակարանները բնդօրինակելու: Ըստ այսմ՝ Վիեննա իմ օրս բաժանած էր երկու մաս. առավոտը 9, 10-են մինչև 2-ը Կալսերական մատենադարանն էի, ճաշեն հետո 3, 4—6—7 Մխիթարյանց մոտ: Միայն սոցա գրչագրաց ցուցակը արտագրելը 5—6 օր տևեց: Մյուս ժամանակը աչքի էի անցնում հնագույն գրչագիրները, կարդում էի հիշատակարանները և երբեմն համեմատում էի նոցա ցուցակը էջմիածնի, մեր ճեմարանի և Վենետիկեցոց ցուցակաց հետ, որոց ինքս հետս ունեի բերած: Մխիթարյանք սիրով բնդունեցին ինձ և ամեն միջոցով աշխատում էին զյուրացնել իմ պարապմունքս, առանձին սենյակ տալով ինձ և երկու վարդապետ նշանակելով ինձ մոտ (մատենապետին և յուր օգնականին), որք հաճությամբ կատարում էին խնդիրքս:

Առ այժմ այսու կվերջացնեմ նամակս, որ բավական երկար եղավ՝ թերևս և ձանձրացուցիչ: Հաջորդ գրությամբ կհաղորդեմ Ձեզ Մյունխենի մեջ հարմարողացած կյանքիս, զբաղմանցս, որպես և այստեղի Մատենադարանում գտնվող հայ գրչագրաց մասին:

Անհամբեր կսպասեմ Ձեր նամակին, որից կհուսամ մանավանդ Ձեր առողջության մասին տեղեկություն ունենալ:

Մնամ խորին հարգանքը և անձնվիրությամբ

Խ. Ճ. ԴԵ. ԽԱԼԱԹՅԱՆ.

Հ. Գ. Անցյալ օր գրավաճառի մոտ լինելով՝ պատահամբ նկատեցի ցուցակում առաջիկա գիրքը— «Die Edessentische Abgarsage auf ihre Fortbildung untersucht, von d-r Matthes», Leipzig, 1882:

Զգիտեմ, հիշյալ Մատթևոս հայտնի է գիտական աշխարհում:

Նույն

Հասցե. Munchen (Bayern) Theresien Strasse. 23,3, bei Schultze.

N 4

Գերամեծուհի նիկիտա Սսիսովիչ

Վերջապես ստացա Ձեզանից վաղուց սպասածս նամակը. շատ ուրախ եմ, որ Ձեր առողջությունը, որպես և հոգեկան գրությունը այդպես զոհացուցիչ վիճակի մեջ կգտնվի. և որ 'Իուք' փոխանակ աղմկալից տոթային և փոշոտ քաղաքի, հակառակ Ձեր հին սովորության, տեղափոխվել եք ամառանոց, որովհարձ նկարագրությունը արդեն բավական է կարծել տալու՝ թե ինչպես զով հանգիստ և անդորր եք անցուցանում այդտեղ ամառը: Կմաղթեմ լավ եղանակ, որպեսզի օգոստոս ամիսն էլ հանգիստ անցնեք ամառանոցում և այնուհետև ցանկամ Ձեզ բարեղեպ ուղևորություն ի չրիմ և գեղեցիկ օրեր այդ երկիրը ևս մի ժամանակ մնալու, որո օդի և խաղողի ազդեցությունը՝ հուսամ շատ բարերար պիտի լինի Ձեզ համար:

Արդեն առաջին նամակավս խոստացել էի համառոտ նկարագրել տալ Ձեռ հաջորդ գրությամբս իմ նիստ ու կացիս, ապրուստիս և զբաղմանցս ի Մյունխեն և ապա մի քանի տեղեկությունք այստեղի արքուն. Մատենադարում գրտյալ հայ գրչագրաց մասին, որ և կշտապեմ կատարել: Նախ իմ մասին:

Մյունխեն ժամանելով՝ ես իսկույն աշխատեցա, ինչպես քանիցս Ձեզ հետ խոսակցել էինք, մի գերմանական կրթված բնտանիք գտնել, որ և հաջողեցավ՝ ինձ, թեև ոչ արժան գնով: Սույն բնտանիքում՝ նույնպես գերմաներեն ուսանելու դիտավորությամբ բնակում եմ — մի ամերիկացի օրիորդ, ամերիկացի երիտասարդ բժիշկ, Կեմբրիջի համալսարանի ուսանող մի անգլիացի և մի սերբ, որ սերբացի երբեմն Մինիստր եղած Իվանովիչի որդին է: Ինչպես տեսնում եք, բավական բազմաթիվ է մեր ընկերությունը, որ անշուշտ տեղիք կուտա միշտ միմյանց հետ լինել, խոսել, վիճել — կարճը՝ գործնականապես ուսանել գերմանական լեզուն, որ իմ գլխավոր նպատակն է: Բացի դորանից, ես ունեմ դասեր, կարդում և թարգմանում եմ հատվածներ, գրքեր: Բ թիվս գերմ. գրքց եմ և հայտնի Վինկելմանի¹⁶, Գուտշմիտի¹⁷, Նեյմանի¹⁸ և այլոց գրվածները, որոց բնագրի ծանոթանալը անշուշտ կարևորություն ունի ինձ համար:— Ինչոքիկ եմ ահա իմ առօրյա պարապմունքս գերմանական լեզվին վերաբերյալ, որո մեջ երանի՝ թե «հսկայական քայլերով հառաջադիմություն» արած ինեի, ինչպես 'Իուք եք ենթադրում. բայց կարծեմ որ հառաջդիմությունը շատ մեծ պիտի չլինի, գոնե մինչև այսօր, թեև բացի վերոհիշյալ զբաղմանց՝ վերին 2—3 շաբաթը ես համալսարանական մի քանի դասախոսությունք ևս հաճախում էի.— «Պարսից լեզուն» այստեղի արևելյան լեզվաց դասատուությանը ծանոթանալու նպատակով, Palaeographie, որպեսզի օգտավետ տեղեկությունք քաղեմ իմ մի երկու դասախոսություն համար, որ պատրաստում եմ հայ գրչագրաց մասին ճեմարանի ուսանողաց կարդալու. վերջին երկու տարուց կուլ-

տուրալի պատմություն, որո կարգացողը համալսարանի ուկտոր և անվանի գիտնական Riehl¹⁹-ն է.— գերմանական նոր դրականության պատմություն և այլն: Կիսոստովանիմ, որ թեև ոչ լիովին և կատարյալ էի հասկանում հիշյալ դասախոսությունքը. (դժվար էլ է պահանջել այսպիսի կարճ միջոցում մանավանդ ամբիոնեն լսածը կատարելապես բմբռնելու). բայց, անտարակույս, դասախոսությանց հաճախելը շատ օգտավետ կլիներ ինձ համար, եթե չվերջանար այնտեղի ամառնային սեմեստրը: Իներևս այլ ժամանակ հաջողի ինձ լսել մի քանի առարկաներ, որք կարող էին նպաստել իմ մասնագիտական պարապմանցս:

Գերմաներեն կանցնիմ հայկական պարապմանցս — այն է գլխավորապես հայ գրչագիրք արք. Մատեն, որոց թիվը 21 է: Սոցա մեջ, ինչպես հետո կտեսնիք իմ կազմած բավական մանրամասն ցուցակեն, առանձին հին և ուշադրության արժանի բաներ չկան, բացի Մագիստրոսի թղթերից, որից արտագրած օրինակը (Եզյանի) — ծանոթ է Ձեզ և մի երկու ԺԲ—ԺԴ դարում գրած բնօրինակի ավետարանից և ժամագրքից: Հետ այնորիկ դիտելու է, որ մնացյալ գրչագրաց համարյա կեսը հանդ. Anatremière-ի մատենադարանից գնած՝ այս դարումս արտագրյալ գրվածներ են: Սոցա մեջ կա մի գրված, որ ահա երկու ամիս գրաված է իմ ուշադրությունս և որը ես արտագրում եմ, և միայն կցավիմ, որ Մատենադարանի գոցման պատճառով պիտի չկարողանամ վերջացնել արտագրությունը: Այդ գրվածն է՝ հույժ մանրամասն և հանգամանորեն «Ցուցակ հայ գրչագրաց եղելոց ի Մատենադարանին Փարիզում» — կազմել ձեռամբ. հանդ. Ջոհրարի²⁰, — մի պատվական աշխատություն (գրաբառ գրած). որ մերձավորապես 15—20 տպագրական թերթ կբռնե. և այս բոլորը միայն 138 հայ գրչագրաց նկարագրությունն է, ոչք կգտնվին հիշյալ մատենադարանում: Բացի զրբի արտաքինը, կազմը, գրչությունը, բովանդակությունը, հոգվածների ցանկը և հիշատակարանը մի առ մի նկարագրելուց և ընդօրինակելուց, Ջոհրարը շատ հաճախ յուր ցուցակն է անցնում այս կամ այն հատվածը, այս կամ այն հոգվածը, ու յուր տեսակետից որևէ արժեք ունի — կամ իբրև նոր, հետաքրքիր բան, կամ մեզ հայտնի նախկին օրինակներից սակավ ինչ կամ բավական զգալի տարբերություն բովանդակող երկ են: Շնորհիվ այսպիսի պատվական աշխատության, կարելի է նաև Փարիզ չեղած, տեսնել, թե ինչ հետաքրքիր, ինչ ուշադրության արժանի գրվածներ կան այնտեղ: Արդարև, Փարիզ, ինչպես ես ես տեսա, կա ցուցակ հայ գրչագրաց Դյուլորեի ձեռամբ կազմյալ (ձեռագիր). բայց նա համառոտ է. հետ այնորիկ ես լսել էի — Ձեզ հայտնի հ. Սուքիաս Պարոնյանի՝ երբեմն Մխիթարյան և այժմ լուսավորչական վարդապետի ջանքով կազմած ա յլ ցուցակի մասին (նույնպես ֆրանսերեն, ինչպես և 'բյուլոթերներ). բայց ինչպես այս օրերս իմացա Ալիշանի իմ հարցիս գրած պատասխանից՝ տպագրած չէ. բացի զորանից՝ լինելով ֆրանսերեն, չէ կարող այնպես լիովին զաղափար տալ գրչագրի մասին, ինչպես հայերենը, որ յուրաքանչյուր հատված, ճառ առաջ է բերում իսկական բնագրեն ստեպ 7—8 և ավելի երես ընդօրինակելով, որո թարգմանությունը ի ֆրանսերեն տաժանելի աշխատություն է: Գեթ ըստ իս, Ջոհրարի կազմած ցուցակը մեծ արժեք ունի, թեև նորա մասին ոչ ոք մինչև այսօր չի հիշում, և նա անուշադիր ընկած է ի Մյունխեն: Կուզեմ հավատալ, որ այդ աշխատությունը մի անգամ ես ստուգելով ի Փարիզ գրչագրաց հետ համեմատությամբ, կարելի էր հրատարակել, եթե ոչ առանձին զրբով, այլ գեթ իբրև հավելված մեր հայ շա-

բաթաթերթից մեկի մեջ և կամ նույնիսկ «Արարատում», որ, կարծեմ, ուրախությամբ պիտի հրատարակե այսպիսի զրվածներ՝ ի գիտություն բանասիրացի:— Վերադարձիս կտեսնեք, թե ի՞նչ աշխատություն է: Առ այժմ կուղարկեմ Ձեզ մի հետարրքիր նշխար՝ կարծեմ մինչև ցարդ անծանոթ ապոկրիֆի — (Երևումն Քրիստոսի Աբղարու), որ պատահմամբ կարդացի Մյունխենի հայ զրչագրաց մեկի մեջ. զարմանալի է, որ զրչագրաց ցուցակ կազմող հանգ. Նեյմանը՝ մի առ մի նշանակելով ի մատենի դտյալ հոդվածները, զանց է առել սորան հիշելու: Գրչագիրը գրում է ԺԳ դարու վերջին (1283), ուր ընդօրինակողը ի միջի այլոց հիշում է թե ինքը այս բոլորը արտադրել է «յրնտիր և ի լավ օրինակէ»:— Արդյոք այս փոքրիկ հատվածը տեղիք չի՞ տալ կարծելու, թե դա մի համառոտ Բաղված է ավելի ընդարձակ անվավեր գրածից, որ հնումը ի հայս անցնում էր ձեռք ձեռք և որը թերևս ժամանակին մի որևիցե ճառրնտրո մեջ գտնվի: Այս մասին կսպասեմ Ձեր կարծյացր:

Չ'պիտեմ, Ձեր ձեռքը ընկած կ'լինի՝ արդյոք «Նոր-Դար» հայ լրագրի 114 համարը. այնտեղ մի հոդված է տպագրած, ուր քննադատության է ենթարկվում իմ անձնավորությունս, որպես և դասավորությունս Հիկեոնում: Թեև հոդվածի հեղինակը ամեն միջոցով աշխատել է քողարկել յուր անձնավորությունը (նա Շ է ստորագրել և քաղաքի անունը չէ դրել). բայց և այնպես նորա երկար ականջներից ճանաչում եմ, թե ով է նա. դա նույն այն պարոնն է, որ մի ժամանակ անմիտ և աննպատակ հարձակողական հոդվածներ էր հյուսում ճեմարանի դեմ (դարձյալ անստորագիր) և հետո նա շատ անգամ թուցիկ պասքվիլներ էր հնարում ճեմարանի վարչության, Հիկեոնի հայոց լեզվի դասավորության և այլոց մասին: Ես կարող էի կարծել, որ այդ պարոնի ինքնասիրությունը տակավին գոհացուցյալ չէ, ես կարող էի ենթադրել թե նորա զգացմունքը առ իս ոչ այնքան բարյացակամ են և մտերիմ. — բայց բնավ չէի սպասել այնպիսի հանդգնության, անամոթ զրպարտության և ստորության, որ այս օրերս ցույց տվեց նա յուր հոդվածում: Ես ավելի լավ կարծիք ունեի նորա մասին... մախլա ս...

Ինչ կվերաբերի իմ վերադարձին ի Մոսկվա, այդ մասին ես նամակ գրեցի այս օրերս պ. Քանանովին, խնդրելով որոշապես հաղորդել ինձ. արդյոք կարելի չէ՞ր իմ պարապմունքս Հիկեոնում սկսել մեր սեպտեմբերի 25-ին: Եթե գոհացուցիչ պատասխան ստացա նորանից, ուրեմն տակավին երկու ամսու չափ ժամանակ ունիմ. ուստի մտադիր եմ ամիս ու կեսեն հետո մի շաբաթվա Վենետիկի Մխիթարյանց այցելել, ուր անշուշտ կհաղորդեմ Ձեր հանձնարարությունը և ապա Դրեղդենի վերա[յով] դեպի Բեռլին կանցնեմ, ուր 4—5 օր կամիմ մնալ այնտեղի մատենադարանում գտնված հայ զրչագրաց հետ ծանոթանալու գիտավորությամբ, որոց թիվը՝ ըստ Պատկանյանի, — թե այնպես սխալ չէ, ինչպես և Մյունխենի, ուր փոխանակ 21-ի — 40 է նշանակած, — 80 է: Այնուհետև կարելի է Պետերբուրգի վերա[յով] դառնամ տուն:

Անցյալ օրը ստացա Վիեննայեն «Գերմ. Հայկ. բառգրքի»²¹ Բ. տետրը (B), որո բաժանորդագրության թերթը երբեմն Ձեզ ևս ուղարկած էր ի Մոսկվա: Այժմ, ինչպես կերևի, բառգրքի կազմողը, որ Հ. Ավետիք անունով երիտասարդ վարդապետ մի է, սակավ ինչ փոխել է յուր հրատարակության եղանակը՝ մտադիր լինելով երկու և ավելի անգամ ստվար դրությամբ ի լույս բնծայել զայն, քան թե առաջ էր նա կարծում: Համաձայն սմին անշուշտ և բառգրքի գինը համարյա կրկնապատիկ է դառնում: Սակայն դիրքը արժանի է ուշադրության.

միայն դիրքը փոքր է և տառերը՝ թե գերմաներեն և թե հայերեն անտանելի մանր են: Եթե կամիք՝ Ձեր մատենադարանի համար ես մի օրինակ կուղարկեմ:

Մինչև վերադարձս՝ հույս ունիմ մի երկու անգամ ևս նամակ գրելու Ձեզ և Ձեր պատասխանը ընդունելու, որին բազմակի

Մնամ խորին հարգանք և անձնվիրություն

Խ. Տ. Գր. ԽԱԽԱՅԱՆ

Մյունխեն 3/15 օգոստ. 84

№ 5

Многоуважаемый Никита Осипович,
дорогой наставник!

Прошел уже месяц с тех пор, как я простился с Вами, чтобы на целый год покинуть дорогую для меня Москву — белокаменную. Илья Лазаревич или Всеволод Федорович, вероятно, уже сообщили Вам кое-что о моем пребывании в Вене. Я не спешил писать Вам в ожидании сообщить новое, любопытное; сверх того, я предполагал поехать в Венецию, где для нас с Вами нашлось бы, конечно, много интересного. Но случилось так, что, ввиду удобств для моих занятий, решил остаться в Вене до января, отложив поездку в Венецию до весны. Вот я и собрался писать Вам, правда, несколько поздно, но зато пространно.

Начну с почтенного нашего приятеля Фридриха Мюллера²². Любезностью и предупредительностью ко мне этого ученого я очарован: он меня принял как старого знакомого так радушно, с такой искренностью, что не мог я и не имел права ожидать. Конечно, пошли разговоры о том, о сем, что делается в Москве и прежде всего о Вас. Описание юбилея еще раньше он получил и был, можно сказать, в восторге от него. Как человек, вместе с изучением языка и истории армян, интересующийся настоящей судьбой нашего народа более чем я мог думать, — Мюллер этому торжеству придает очень большое значение: эту признательность армян к своему маститому ученому, признательность, выразившуюся с такой искренностью, он считает событием в жизни армян, чему надо радоваться. По-армянски Ф. Мюллер знает гораздо больше, чем, может быть, мы с Вами думали: он читает и свободно переводит *գրքեր* и даже отчасти *աշխարհաբար*. При мне он прочитал все оглавление моей книжки (*ծրագիր*²³) и буквально без ошибки перевел его. Поэтому в описании юбилея, если не русский, то армянский текст, можно сказать, целиком ему доступен. В разговоре, между прочим, я выразил желание иметь его фотогр. карточку. Он обещал охотно приготовить к следующему разу: он передал мне 2 карточки — одну мне, другую попросил выслать Вам, за что я от Вашего имени поблагодарил его. Эту карточку теперь Вы имеете перед собою. Надо Вам сказать, что, несмотря на здоровье и бодрость Мюллера, у него, к крайнему сожалению, глаза плоховаты: так что, наприм., когда он показывал мне здание и залы университета, при спуске по лестницам приходилось мне поддерживать его.

Познакомился я у мхитаристов со знаменитым славистом Миклошичем²⁴, не мало интересующимся этнографией Кавказа. Хотя с трудом, но говорит все же по-русски, и уж, конечно, свободно читает и отлично знает русский язык.

Мне предстоит много еще знакомств с профессорами и специалистами; но я намеренно откладываю, чтобы более свободно говорить с Вами, чего надеюсь я до известной степени достигнуть. К числу специалистов и ученых принадлежит известный этнограф Krapss, который, по словам Мюллера, весьма будет рад познакомиться как со мною, так и с содержанием моей «Программы» и вообще завести сношения с лицами, интересующимися этнографией России и Востока.

Мхитаристы все те же, что и прежде, и живут они все по-старому. Այտրնյան, сделавшись аббатом, по-видимому, поправился здоровьем, выглядит бодрее, осанистей. Հ. Ղևնդ Հովնանյան²⁵ тот же, что и три года назад; борода только гуще и седее стала. Вот уж истинно молодцеватый старик: несмотря на свой преклонный возраст, бегают по крутым лестницам не хуже молодых! Оба, конечно, расспрашивали о Вас, о Вашем здоровье; о юбилее²⁶ речь шла тоже довольно долго, причем я не преминул заметить, что от их конгрегации мы ожидали больше. Они шлют вам свой привет с пожеланием здоровья и благоденствия. Меня приняли они очень любезно, даже дружески; Այտրնյան при первом же свидании пригласил меня к следующему дню откусать вместе с братией. В громадной зале были сервированы столы, во всю длину,—для учеников, число которых простирается до 30—35, для монашествующей братии — человек 15. Для нас с аббатом был накрыт особый стол. За столом прислуживал нам эконоом монастырский — Հ. Ավետիք Կոլլազյան, автор немецко-арм. словаря. Через несколько дней был у меня с визитом general-sekretär конгрегации. Кроме упомянутых двух старых представителей здешн. мхитаристов, особенно выдаются двое молодых. Из них один — Հ. Հովհաննես — уже старый мой знакомый, другой — моложе его — Հ. Գրիգորի Գալեմբարյան²⁷, — особенно расположенный ко мне. Это любознательный и весьма способный юноша, принимающий особенно деятельное участие в «Հանդես»; (он подписыв. Հ. Գ. Գ.). Между прочим, он единственный, кажется, из всей братии интересуется апокрифами и имеет кое-какие работы. Весьма сожалеет он, что не знает русского языка, на котором написаны Ваши переводы и исследования по этой части. Жаль только, что при таких хороших задатках нет возможности широко развиться его способностям, ввиду отсутствия высшей школы и ученых специалистов в среде конгрегации. Лучший и ученейший из них, Айдинян, и он теперь отдыхает; он, по-видимому, давно простился с наукой. В настоящую минуту он занят изготовлением изящного адреса ко дню юбилея Льва XIII. Надо, впрочем, отдать справедливость Айдиняну: адрес этот будет прекрасным сюрпризом не только для римского первосвященника, но и для всех, интересующихся армянской палеографией, ибо в нем будут раскрыты все богатства — chef-d'oeuvre миниатюр, заставок, инициалов арм. расписного искусства.

От живых перейду теперь к покойникам. О молодом, талантливом ученом, Napusz'n, так блестяще начавшем свою ученую деятельность. Вы уже читали на страницах «Հանդես». Его смерть оплакивается всеми и особенно мхитаристами, с которыми он был в близких сношениях. Еще потеря для науки и более важная: знаменитого Гудшмидта не стало более! Оказывается, он скончался еще в марте, и мы до сих пор ничего не знали. Правда, он был строг к Хоренскому, подчас резок и даже несправедлив к нему, — но заслуги его даже перед арм. историей немаловажны.

Кстати о Хоренском. У мхитаристов увидел я на днях книжечку Adolf'a Baumgartner'a (Leipzig, 1885) касательно Хоренского. Впрочем, вернее будет сказать, что эта брошюра касается более Лауера, переводчика Хоренского. Из беглого просмотра я успел заметить, что Baumgartner имеет целью показать несостоятельность Lauer'a в знании арм. языка, что он доказывает рядом примеров из его перевода. В конце брошюры приведено много слов из Словаря Lauer'a (в его Грамматике), показывающих плохое знакомство автора или составителя с арм. грамматикой. При этом видно, что беспощадный критик сей говорит все это и доказывает, будучи сам хорошо знаком с арм. языком и литературой. Если у Вас нет еще этой брошюры, стоит ее выписать. Вот ее заглавие: d-r M. Lauer und das zweite Buch des Moses Chorenazi, — von d-r Adolf Baumgartner, dacin't der alten Geschichte an der Universitat Basel. — Leipzig, 1885, In commision bei Th. Stanffer. — стр. 24.

